

ՓՈԽԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ Հ. ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Ն. Գ. Խաչատրյան

Հայոց լեզվի և նրա դասական դժան մեթոդիկայի ամբիոն

Քննում ենք նրգիծաբան Հ. Պարոնյանի ինքնատիպ ոճը պայմանավորող պատկերավորման միջոցներից մեկը՝ փոխաբերությունը: Յուրց ենք տալիս, իր նրգիծաբանը այս հնարը ամբողջությամբ ծառայեցնել է նրգիծանքին:

Բառերը խոսքի մեջ հաճախ գործածվում են ոչ ուղղակի, այլ փոխաբերական իմաստով: Փոխաբերական գործածությունը ընդարձակում է բառերի իմաստային կողմը: Փոխաբերությունը պատկերավորման այնպիսի միջոց է, որի ղեկավարում նրկու առարկաների կամ նրեույթների ներքին կամ արտաքին նմանության հիման վրա մի բառի փոխարեն գործածվում է մի այլ բառ: Բառի բառարանային իմաստը, ստանալով զանազան հուգակա նրքերանգներ, ուժեղացնում է սովածի ղերը, նրեույթի, առարկայի այս կամ այն հատկանիշի ներգործությունը, խոսքը դարձնում պատկերավոր ու արտահայտիչ: Էդ. Ջրբաշյանը փոխաբերությունը համարում է այլաբերության մի տեսակը. «Այն այլաբերական բառերը, որոնք հենվում են նրկու նրեույթների նմանության վրա, կոչվում են փոխաբերություն» (1.234): Փոխաբերությունը տարողունակ պատկեր է՝ հիմնված վառ գուգորդությունների վրա: Նրա հիմքում կարող են ընկած լինել առարկայի ամենատարբեր հատկանիշներ:

Փոխաբերությունը ստեղծվում է համեմատության հիմքի վրա: Ծ.Բալլին գրում է. «Փոխաբերությունը ոչ այլ ինչ է, ինքն ոչ համեմատություն, որի մեջ գիտակցությունը ավանդույթի ազդեցության վերացական հատկացությունը մերժեցնում է կոնկրետ առարկային՝ դրանք գուգաղբելով մի բառի մեջ» (2.225): Հ. Պարոնյանը ստեղծել է ինքնատիպ փոխաբերություններ: Այն միտքը, որ ազգային նրեսփոխանները կատարածուներ են, անողնաշար, չունեն սնեիական կարծիք, հեղինակը սեղծ ենք նրեույթացնում է այսպիսի փոխաբերությամբ. «...ինչպես կապրի ուրեմն մեր Ազգային նրեսփոխանական ժողովն, որուն մեկ թառորդը մարդ ու նրեր թառորդը թույթակ է» (3, 437): Փոխաբերությունները արտահայտվում են բառերով, նրքենք բառակապակցություններով: Էդ. Աղայանը բառական փոխաբերությունը համարում է մակերեսային,

իսկ կապակցականը՝ խորքային(3.341): Այս տերմինները, կարծում ենք, հաջող չեն:

Բառային փոխաբերությունները հիմնված են փոխաբերվող եւ փոխաբերվալ բառերի ցույց տված առարկայի որեւէ հատկանիշի նմանության վրա: Օրինակ. Հ. Պարոնյանը «Պտույտի» մեջ գրում է. «Քում Բաբուի ներքինն ոճ է, իսկ արտաքինն՝ աղավաղ» (4, 209): Փոխաբերվող բառի՝ ոճի նեեցությունը, չարությունը վերագրվում է Քում Բաբուի բնակչին. նույնացվում են մարդու նեեցությունն ու չարությունը ոճի նույն հատկանիշների հետ: Երկրորդ եղում փոխաբերության հիմք են դառնում աղավաղ այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են՝ մաքրությունը, ազնվությունը, գեղեցկությունը, որով էլ ներկայանում է քում քաղաքին:

Կապակցական փոխաբերությունները պայմանավորված են տվալ բառակապակցությամբ: Այդ կապակցությունը նրկու կամ ավելի բառերի գուգակցումն է, որի փոխաբերական իմաստը ըմբռնվում է միայն համապատասխան բառային միջավայրում: Բառերից որեւէ մեկը առանձին գործածվելու դեպքում կարող է եւ փոխաբերական իմաստ չունենալ: Փոխաբերական իմաստ է ստանում կապակցվող բառի մասնակցությամբ: Օրինակ. Հ. Պարոնյանը դրական հատկանիշներով է պատկերել իր ուսուցչին՝ Ներսես Վարժապետյանին, որը նշանակալից դեր է խաղացել իր ժողովրդի կյանքում, ծառայել է նրան անմնացողը եւ ձեռք բերել ժողովրդականություն: Հեղինակը նրան նվիրված դիմակառում գրում է. «Աշակերտիդ սիրույն համար, նրգիծաբանության հատաշաղիմության սիրույն համար քանի որ փորք թերություններ ունեցեր, որ իմ գրելիս այ սիրող չկուրի» (5, 273):

Փոխաբերությունները լինում են լեզվական եւ տեհատական: Լեզվական փոխաբերությունները ընդհանրական բնույթ ունեն: Անհատական-հեղինակային փոխաբերությունները ստեղծվում են առանձին հեղինակների

կողմից: Փոխաբերական նշանակություններով ավելի հաճախ հանդես են գալիս կենդանիների անվանումներ, թանկագին քարեր, նյութ նշանակող մի շարք բառեր:

Փնդարվեստական գրականության մեջ հատկապես երգիծական տպավորություն ստեղծելու նպատակով գործածվում են անհատական փոխաբերությունները: Դրանց միջոցով Պարոնյանը արտահայտում է իր հեգնական, ծաղրական վերաբերմունքը այս կամ այն երեւույթի նկատմամբ:

Առարկաների նկատմամբ տարբեր վերաբերմունք արտահայտելու մեծ հնարավորություններ ունի բարդ իր բազմազան նրբիմաստային երանգներով: Հ.Պարոնյանը ծաղրում է ազգային ջոջ Տոթթոր Ռուսիյանի՝ աշխարհաբար լեզվի՝ զարգացման հարցում գուցաբերած ծայրահեղությունները, սխալ ըմբռնումները. «Հոլմեր ամուր ու անառակ բերդ մըն է, բնավ չի համոզվիր» (5, 276): Ազգային ջոջ Գ.Է.Նիժնյանի վարդապետությունը հեղձում ու ծաղրում է հետևյալ փոխաբերությամբ. «Մեւ հագուստներու մեջ փաթտվելեն մնկ երկու տարի ետքը՝ Եվդոկիա կուղևորվի, ուր շատ ընդունելություն չգտներ» (5, 181): Ընդգծված բառերը իրենց բառարանային արժեքով դրական կամ բացասական իմաստ չեն բովանդակում: Բայց այդպիսի կարող են ստանալ համապատասխան համատեքստում: Մտնելով տարբեր կապակցությունների մեջ՝ այդ բառերը ձևորեն բերում տարբեր իմաստներ՝ տվյալ դեպքում՝ բացասական: Եվ ընդգծվում, ընկալվում է տվյալ կոնտեքստում ձևորեն բերած իմաստը: Երգիծաբանին հատուկ է բառակապակցության կամ նախադասության անդամների իմաստային անհամատեղելիությունից բխող իրավիճակների ստեղծումը: Այդ իրավիճակի ստեղծման հարցում դեր են կատարում տարբեր բառերի կամ բառերի կապերը իմաստների անսպասելի գույգորդումները: «Նստողտում» մեջ անգլիական հյուպատոս Թրոթրի շահախնդրությունը մերկացնում ու ծաղրում է հետևյալ փոխաբերությամբ. «Եթե հիշյալ հյուպատոսն յուր ստամոքսին վրա կը հիմն յուր քաղաքակառությունը՝ գործերնիս բուրդ է» (3, 319): Կոմիկականը հիմնված է հյուպատոս, ստամոքս եւ քաղաքակառություն բառերի զուգակցման վրա, որի անտրամաբանական լինելը շատ ակնհայտ է: Եվ երբ ակնհայտ անտրամաբանականությունը ներկայացվում է լրջորեն, կոմիկան ավելի ակնհայտ է դառնում: Ինչպես նշեցինք, փոխաբերական իմաստը ձևա-

փոխում է առարկաների ինչ-որ նմանության, ընդհանրության դիտարկման հիման վրա: Մի շարք փոխաբերություններում հաճախ դա չի ըմբռնվում. օրինակ փոխությունը խախտվում է հատկապես հեգնական բնույթի օրինակներում: Այսպես, հեղինակը քննադատելու ու ծաղրելու է գրաբարամուկներին. «Ինչ ըսեմ ես այդ սրամիտ եւ կատակասեր Ծախուրին, որ «Ազգանվեր հայուկայց» ընկերության ատենապետներուն (խոսքը բանաստեղծուհի Սիպիլի մասին է-Ն.Խ.) գրաբար նամակին վրա գնդասեղի ծայրովն դալա: Մեծ վերք մը բացավ գրաբարին վրա՝ որ լայով եւ ողբալով գնաց գնդեցիկ սեռին գիրկն ընկավ» (3, 488):

Հակոբ Պարոնյանը ստեղծել է բարդ ու բազմաբնույթ փոխաբերություններ: Դրանք համապատասխանում են ստեղծագործության բովանդակությանը եւ ոճական տեսանկյունից ներդաշնակում են իրար: Պարոնյանական փոխաբերություններում անձի հատկանիշը վերագրվում է բնության երևույթներին, կենդանիներին եւ հավաքակ, շնչավոր առարկաների հատկանիշը վերագրվում է անշունչ առարկաներին, վերացական հասկացություններին եւ ընդհանրապես:

Անդրադառնալով Հ.Պարոնյանի փոխաբերություններին՝ ըստ տարբեր խոսքի մասերի. փոխաբերական իմաստով հանդես են գալիս հատկապես գոյականները, ածականները, բայերը: Շատ են հատկապես գոյականով արտահայտված փոխաբերությունները: Օրինակ. «Ո՛վ, կյանք, ինչ անտանելի բեռ մ'ես դու մարդու վրա» (3, 332): Բեռ բառի փոխաբերությամբ շեշտում է մարդկանց ծանր, անտանելի կյանքը, թշվառությունը:

Պարոնյանը փոխաբերաբար գործածել է դիցաբանական, պատմական մի շարք հերոսների անունները: Հնդիսակը մերկացրել է ազգային ջոջ Ստեփան Այսանյանի երկերեսանիությունը, կարծիքների հարափոխությունը: Նրան ներկայացնում է այսպես. «Մովսեսի հետևող... օրենքներու գործադրության մասին, եւ կենդանի Պրոտեստ... զույգ փոխելու տեսակներով» (5, 37): Պրոտեստը ըստ դիցաբանության ծովի նման փոխում էր իր կերպարանը:

Փոխաբերական կիրառությամբ հանդես են գալիս նաեւ ածականները: «Մեծապատյով մուրաքցիկաներ» վիպակում բանաստեղծը խոսում է վերամբարծ ոճով: Դրանով հեղինակը հեղձում է պոռոտայիստ բանաստեղծին եւ ընթերցողին պատկերացում տալիս նրա էության, բնության

մատին. «Բանաստեղծի մը սիրտը շատ *փափուկ* է, ասնաթեթեմ խոսքն մը կը վիրավորվի» (3, 34): Փոխաբերական իմաստով ասելի հաճախ գործածվում են *բայեր*: Ինչպես. «Պարոնյանը խստորեն քննադատել է Հովհաննես Տերոյնցի հասարակական արտառվոր գործունեությունը, «Պատվելիին» խմբագրական աշխատանքը: Հեղինակը Տերոյնցի ատելությունը դժնդկադատական մամուլի նկատմամբ ցույց է տվել հետևյալ փոխաբերությամբ. «Երբ հայ թերթ մը փափաքեր քիչ մը *յույս վատեր*, Պատվելին կուգար, *կը փչեր* զայն» (5, 47):

Մեծ երգծաբանը ստեղծել է դիպվածային բառակապակցություններ, որոնք դարձվածքների արժեք ունեն: Դիպվածային կապակցությունները ինքնատիպ են, և դրանց դիպուկ գործածումով հեղինակը կատարում է երգծական մեծ ընդհանրացումներ: Այսպես. «Մեծապատիվ մուրացկաններ» փախկում այսպես է բնորոշում ուսուցիչների, մանկավարժների ծայրահեղ ծայր սոցիալական վիճակը. «Թե ինչ կը քաշեն Պոլսո դասատուները. *խնորհարար գենիթը* բարձրացած են» (3, 378): Բերնսը բառակապակցություններ, որոնք դիպվածային դարձվածքների արժեք ունեն. «*Բարկորթյան հուր, թշվառության վիղր, ծախս ապրանք* (աղջիկներ-Ն.Լ.), *խելքի խանութ, սիրո շղթա, մահվան կտորն* (քույր-Ն.Լ.), *համբույրներու արտ, սիրո կրկնատոմար*: Այս դիպվածային արտահայտությունների ստեղծումը եւս մեկ անգամ ապացուցում է Պարոնյան երգծաբանի ինքնատիպությունն ու անգուցականությունը: ՀՊարոնյանի լեզվում հաճախ ենք հանդիպում ժողովրդական և գրական ծագում ունեցող, երգծական շեշտվածություն ունեցող դարձվածների, արտահայտությունների: Լեզվական, ժողովրդական արտահայտությունները խոսքը դարձնում են կենդանի ու աշխույժ:

Խոսքն արական ծագում ունեցող դարձվածների մասին, որոնց ճիշտ ու տեղին գործածություն ունի յուրահատուկ ռեակցիոն դեր և արժեք: Հեղինակը «Պտույտ մը...» երկում Զատիկ փաշայի գյուղացիների մասին գրում է. «...Երբ իրենց գավակներում դատարարական վրա խոսք բացվի՝ այն ատեն *անդամալույծ կը կտրին* եւ *արոպատիկյա ավազանին* մեջ նետվելու փափագ ալ չեն գգար» (5, 124): Ըստ սովորաբանի, պրոպատիկյա ավազանում լողացող անդամալույծները բուժվում էին: Հեղինակը սրանով հեզնում ու պարսավում է գյուղացիների անգործությունը, անտարբերու-

թյունը վարժարանների բարեկարգման, իրենց երեխաների կրթության ու դատարարական նկատմամբ: *Անդամալույծ կտրին* անհատական դարձված է, որը նշանակում է անտարբերություն, անգործության կմախքված: «Պարոնյանն անխառն է ապագային քնույթ ունեցող քաղաքական, հոգևոր արտառների նկատմամբ, որոնք նա «անդամալույծ» բառով համարում է հոգևոր հաշմանդամություն և ցավ է զգում, որ այդպիսի հիվանդը չի էլ մտածում բուժվելու մասին: ՀՊարոնյանի ստեղծագործություններում հանդիպում ենք ամբողջական նախադասություններով տրված փոխաբերությունների: Նույն նախադասության մեջ հանդես են գալիս տարբեր խոսքի մասերով արտահայտված փոխաբերություններ. «*Օղին, ուրախ սրտներուն աղջն դրախտ կը բանա, տխուրներուն ալ դիմադր դժոխքը կը հանեն*» (6, 179): «*Սովյն քարերն դուրամարս կերակուր կը չինեն*» (5, 173): Հաճախ փոխաբերությունը գործածվում է մի շարք դարձությունների հետ զուգակցված: «Հատկապես զեղարվանտական ոճում» փոխաբերությունները որոշակի հարաբերության մեջ են մտնում ոճական այլ միջոցների հետ, և հաճախ այդ հարաբերակցությունը դառնում է փոխաբերության ձևավորման միջոց(7.56): Հաճախ Պարոնյանի ստեղծագործությունները հարուստ են հատկապես չափազանցությունների հետ զուգակցված փոխաբերություններով: «Ատամնաբույժի արելեյան» կատակերգության կերպարներից Թովմասն իր սիրելիների՝ Մարթայի անբարոյականությունը ծաղրում է հետևյալ փոխաբերությամբ. «Աղեկ կը ճանչնեմ այն Մարթան, իր երեսը *հանրայններու արտ* մ'էր, որուն վրա եթե համրելու լլլում, հագարի չափ սերմանած եմ» (6, 172):

Հակոբ Պարոնյանի ստեղծագործություններում հանդիպում ենք հակադրության հիմքի վրա ստեղծված փոխաբերությունների: Սատիրայի փայլուն օրինակ է Փանոսյանին նվիրված դիմանկարում պատկերված «Մանգուրմ» և «Օրպակր» թնրքերի դատավարության նախապատրաստությունը, «ճակատամարտը»: Հեղինակը մերկացնում է բովանդակագույն մամուլը, որը զբաղված էր ավելի շատ ճամպարտականություններով, սնամեջ ու անհեթեթ վեճերով, դատարկ վիճաբանություններով. «...Սագի փնտուրով զինված, վեց ամիս իրարու դեմ կատաղաբար պատերազմեցան և դաշտի վրա հազարավոր ընթերցողներ վիրավորելին նորը արյունով ներկեցին համեստ դմբերը» (5,88): Այս փոխաբերությունը զուգորդված է հակադրության ու

չափազանցության հետ, որն էլ ավելի է սաստկացնում մերկացման ուժը:

Փոխաբերությանը, որպես պատկերավորման միջոցի, քնորոշ է անձնավորումը: Առարկաներին, ներույթներին, գործողություններին վերագրվում է մարդկային այս կամ այն հատկանիշը: «ժաղտումի» մեջ տենդի ախտավորության մասին գրել է. «Այս տենդ ըսվածը բավական ռազմագետ է. կարծես թե Ալբանյայի բանակեն ելած է, որ քաշվիլ կը ձեռագունե եւ մեկ նրկու շաբաթն նորեն կը հարձակի» (3,299): Հմուտ նրգիծաբանը նախադասությունն այնպես է կառուցել, որ թվում է՝ խոսքի հիմնական նյութը տենդն է, բայց իրականում խարազանում է Եվրոպայի քաղաքականությունը, մասնավորապես Ալբանիայի բանակի քաղաքական «խաղները»:

Փոխաբերության շնորհիվ մեր լեզվում առաջացել են առանձնահատուկ արտահայտություններ ու ասացվածքներ: Հ.Պարոնյանը այս ռճական դարձույթի հիմքի վրա ստեղծել է մի շարք բնավոր խոսքեր, որոնք իմաստալից են եւ պատկերավոր: Սրանք նպաստում են խոսքի սնդմությանը, պատկերավորությանը: Այսպես. «Պարը սիրո տոնավաճառն է: Սիրո դաշնադրություններն հոն կը կնքվին նախ» (3,469), «Թատրոնն այսօր անդամազննության դպրոց մ'է» (3,469), «Մպասողին համար ժամերը դանդաղ կը քալեն», «Քամբասանքը հով մ'է, որ կուգա, կ'անցնի, վա՛յ անոնց, որ ամեն հովն կը շարժին» (5,39): Նշենք, որ Հ.Պարոնյանը կնոջ մասին իր պատկերացումները ներկայացրել է այնպիսի արտահայտություններով, որոնցից ներում է նրա վերաբերմունքը կին արարածի նկատմամբ. «Կիին շինականներու մեջ միայն օգնական է յուր էրիկին, միջակ մարդերու մեջ բնո եւ ազնվականներու մեջ՝ պատիժ» (3,469): «Կինը բնավորությանդ չհարմարեցա՞վ, ամեն օր դժոխքի մեջ նա» (4,62): Նա ստեղծությամբ է լցված քաղցրնի կանանց նկատմամբ. «Կին մը իր ամուսնույն գլխույն փորձանք մ'է» (6,78): Կամ՝ «Այս նախանձը չէ՞ որ կանանց գեղեցկությունը կ'ոչնչացնե» (6,103):

Մեծ նրգիծաբանը ստեղծել է փոխաբերության վառ օրինակներ, որոնք խոսում են

երգիծաբան գրողի լեզվաոճական չգնրազանված վարպետության մասին:

Ամփոփում

Սույն հոդվածում ներկայացնում ենք փոխաբերության օգտագործման վարպետությունը մեծ նրգիծաբան Հ.Պարոնյանի կողմից: Քննում ենք փոխաբերությունը, նրա դրսևորումները, տմայկները հեղինակի նրկերում և ցույց տալիս, որ Հ.Պարոնյանը փոխաբերության նրգիծական հնարավորությունները գործածում է շատ լայն ընդգրկումով՝ համագգային, քաղաքական ոլորտներից սկսած, վերջացրած կնճցադին, քաղաքավարությանը վերաբերող հարցերով:

Резюме

В данной статье представлено мастерство Пароняна при использовании переносного значения. Проводится исследование, типов в произведениях писателя. Автор показывает, что Паронян особенно широко применяет сатирические возможности переноса, начиная со сферы политической общенациональной и кончая вопросами, касающимися этики и быта.

Գրականություն

1. Էդ.Ջրբաշյան, Գրականության տեսություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 1980:
2. Ш.Балли, Французская стилистика, М., 1961.
3. Հ.Պարոնյան, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 4, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Եր. 1965:
4. Հ.Պարոնյան, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 3, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Եր. 1964:
5. Հ.Պարոնյան, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 2, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Եր. 1964:
6. Հ.Պարոնյան, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 1, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Եր. 1965:
7. Օ.Քաբաշյան, Փոխաբերությունը արդի հայերենում, Եր., 1998: